

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**  
**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**Օ Ր Ե Ն Ք Ը**  
**«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 14. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի նշանակումը և հետ կանչումը**

~~1. Դիվանագիտական ներկայացուցչին նշանակում և հետ է կանչում Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Դիվանագիտական ներկայացուցչին վարչապետի առաջարկությամբ նշանակում և հետ է կանչում Հանրապետության նախագահը՝~~

~~1) դիվանագիտական ծառայության առնվազն 15-ամյա ստաժ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցրած անձանց շրջանակից:~~

~~2) արտաքին քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված՝ այլ անձանց շրջանակից՝ պայմանով, որ նման նշանակումների արդյունքում այս կատեգորիայի անձանց շրջանակից նշանակվածների ընդհանուր թվը չի գերազանցում դիվանագիտական ներկայացուցիչների ընդհանուր թվի 15 տոկոսը:~~

~~1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված անձանց նշանակման առաջարկը Հանրապետության նախագահին ներկայացնելուց առաջ վարչապետը կարող է իր առաջարկած անձի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով, որը կարող է ներկայացնել թեկնածուի վերաբերյալ խորհրդակցական եզրակացություն: Եզրակացությունը կցվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերի փաթեթին:~~

2. Վարչապետի առաջարկությանը կցվում է դեսպան կամ մշտական ներկայացուցիչ նշանակելու կամ հետ կանչելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը, նշանակման դեպքում՝ կից հավատարմագրով:

3. Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է առաջարկությանը կցված հրամանագրի նախագիծը կամ այն առարկություններով վերադարձնում է վարչապետին:

4. Եթե վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է հրամանագիրը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում Հանրապետության նախագահին վարչապետի ներկայացրած առաջարկությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու կամ հետ կանչելու մասին՝ նշանակման դեպքում ստորագրելով հավատարմագիրը:

6. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները, ապա, Սահմանադրության 139-րդ հոդվածի համաձայն, դիվանագիտական ներկայացուցիչը նշանակված կամ հետ կանչված է համարվում իրավունքի ուժով սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված եռօրյա ժամկետի ավարտին հաջորդող օրվանից, որի մասին վարչապետն անհապաղ գրավոր հայտարարություն է տարածում և ստորագրում է նշանակման հավատարմագիրը: Գրավոր հայտարարությունն ստորագրվում է վարչապետի կողմից և հրապարակվում Կառավարության պաշտոնական կայքէջում:

7. Դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնավարման ժամկետի երկարաձգման և կրճատման ընթացակարգերի վրա տարածվում են սույն հոդվածի դրույթները: